ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա պրակը նվիրված է Արցախի արձանագրություններին, սակայն Արցախ անվանումը պայմանական է, որովհետև նրանում ամփոփված նյութերը լրիվ չեն համապատասխանում այդ նահանգի սահմաններում գտնվող հուշարձաններին։ Նախ՝ Արցախի դաշտավայրերում հին հուշարձաններ չեն պահպանվել։ Մյուս կողմից, պրակի մեջ են մտել Գանձակ քաղաքի և Խանլարի ու Գետարակի շրջանների նյութերը, որոնք հին բաժանմամբ պատկանել են Ուտիք նահանգին։

Այսպիսով, պրակն ամփոփում է Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի նյութերն ամբողջությամբ, նրա հարևան Լաչինի ու Քյալբաջարի շրջանների և Քուռի աջափնյա՝ Խանլարի, Դաշքյասանի, Շամքորի ու Գետաբակի լեռնային շրջանների նյութերը, որտեղ մեծ թվով հայկական հուշարձաններ կան և հայ բնակչություն։

Արցախի գավառաբաժանումը հազարամյակների պատմաքաղաքական անցուդարձերի շնորհիվ մեծ փոփոխությունների է ենթարկվել։ Դարերի ընթացքում փոխվել են նաև գավառների անունները, հայտնի է միայն նրանց մոտավոր տեղադրությունը, այդ պատճառով էլ նյութը դասավորել ենք ըստ ներկայումս գոյություն ունեցող շրջանների՝ հետևյալ հերթականությամբ։

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

Լեռնային Ղարաբաղի այժմյան ամենամեծ շրջանն է։ Գրավում է Թարթառ գետի միջին հոսանքի և Խաչեն գետի վերին հոսանքի տարածքը։

Շրջանի այն մասը, որ բռնում է Խաչեն գետի հովիտը, հնում կազմում էր Արցախի Մեծիրանք գավառը։ Այժմ էլ Քոլատակ գյուղի մոտ մնացել է Մեծիրանից ս. Հակոբի վանքը։ Միջին դարերում գետի անունով գավառը կոչվել է Խաչեն և պատկանել Ղարաբաղի իշխանական ամենաուժեղ տոհմին՝ Հասան-Ջալալյաններին, որոնք կառուցել են իրենց հոգևոր կենտրոնը՝ Գանձասարի վանքը, իսկ վանքից ներքև, աջ ափի անտառապատ լանջում՝ իրենց ապարանքը։

Մելիքությունների շրջանում այդ երկրամասը կազմում էր Ջրաբերդի կամ Ջարաբերդի մելիքությունը, որի ապարանքի ավերակները մնում են հին «Քըղըքատեղ» («Քաղաքատեղ») կամ «Մայրաքաղաք» կոչված ավերակ ավանի ծայրում, իսկ անմատչելի բերդը՝ Ջրաբերդը, գտնվում է ոչ շատ հեռու Թրզի կնտակի խառնարանից։ Մելիք-Իսրայելյանների փառավոր ապարանքի մնացորդները գտնվում են Կուսապատ գյուղի մոտերքում։

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆ

Գրավում է Կարկառ գետի լեռնահովիտը։ Միջին դարերում մտնում էր Խաչենի իշխանության սահմանների մեջ, հետագայում կազմել է Վարանդայի մելիքության հիմնական մասը, որի կենտրոնն էր Ավետարանոց կամ Ջանախչի բերդավանը, ուր մինչև այժմ էլ մնում են Մելիք-Շահնազարյանների մի քանի ապարանքները։ Ռուսաստանի տիրապետության սկզբնական շրջանում այդ բերդավանն իր շրջակայքի գյուղերով դառնում է ռուս-պարսկական պատերազմներում աչքի ընկած գեներալ Մադաթովի կալվածքը։ Նա ծագումով այս գյուղից էր և վերակառուցելով մելիքական ապարանքներից մեկը՝ այն դարձնում է իր նստավայրը։

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

Գրավում է Խոնաշեն գետակի հովիտը և Քոնդտլան գետի վերին հոսանքի մասերը։ Ընդգրկում է հնագույն Հաբանդ և Մուխանք գավառների մասերը։ Հետագայում Վարանդայի մելիքության մեջ էր մտնում։ Շրջանը հարուստ է պատմական հին հուշարձաններով։ Հայտնի են Ամարասի, Հերհերի վանքերը և Եղիշա կույսի անապատը, հատկապես Հացի գյուղի մոտի՝ «Բռի եղցի» կոչված հուշարձանախումբը։

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ

Արցախի մյուս՝ Հաբանդ գավառի հիմնական մասն է կազմում, հետագայում՝ Դիզակի մելիքության կենտրոնական մասը։ Շրջանի նշանավոր գյուղերից է Տումին, որը IX—XIII դարերում եղել է իշխանական կենտրոնատեղի, ապա Տող գյուղը, որը Դիզակի մելիքների նստավայրն էր, ուր մնում է Մելիք Եգանի բնակելի տունը՝ կանգուն և այժմ էլ բնակելի։ Պահպանվել է հիշյալ երկու գյուղերի արանքում, բարձր սարի գագաթին բարձրացող Քթիշ հնագույն բերդը՝ Քթիշ կամ Գտիշ վանքով։

ՇՈՒՇՈՒ ՇՐՋԱՆ

Ղարաբաղի ինքնավար մարզի ամենափոքր շրջանն է, բռնում է Կարկառ գետի վերին մասերը։ Շրջանում հին հուշարձանները վատ են պահպանվել և այդ շրջանից արձանագրություններ քիչ ունենք։

ԼԱՉԻՆԻ ՇՐՋԱՆ

Գտնվում է հին Աղավնու, այժմ Հագար գետի վերին վտակների՝ Մինքենդի, Հոչազի լեռնաձորերում։ Այժմ էլ շրջանն ունի փոքրաթիվ բնակչություն, որովհետև փոքրիկ գյուղերը տեղավորված են ձորերի նեղլիկ հարթակների վրա՝ լեռնաշղթայի վերին մասերում, ուր ալպյան արոտների գոտին է։

Բոլոր գյուղերում էլ կան հայկական հուշարձաններ, որոնցից են.

1. Ծիծեռնակավանք—Ջորս զույգ հաստահեղույս մույթերի վրա կանգնած եռանավ բազիլիկ շենք է՝ IV—V դարերին բնորոշ ձևերով։
2. Նկեղեցի—Ներքուստ խաչաձև, ղմբեթավոր, շինված է կոփածո և որբատաշ քարերով. բոլոր պատերը հաքած են, փլվելու ենթակա, ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից. արձանագրություններ չունի, բայց, անկասկած, VII դարի հարտարապետության արժեքավոր կոթող է. գտնվում է Վարազղան գյուղի հանգում։

3. Բազիլիկ եկեղեցի—Շինված է կոփածո քարերով. երեք զույգ մույթերի վրա կանգնած եռանավ տաճար է՝ IV—V դդ. գտնվում է Շեյլանի գյուղի մոտ՝ ձորամիջում։ Արձանագրություններ չունի։

4. Երեու կամուրջներ—Կառուցված են այդ ձորամիջով հոսող գետակի վրա, որոնց վրայով ճանապարհը տանում է հարևան Կատոս գյուղը։ Կամուրջներից մեկը շատ հին է և այժմ միայն խելերն են մնացել, որոնցից մեկի վրա պահպանվել է վարպետի պատկերը, գործիքը ձեռքին, երկար չուխայով։ Գլխի մասը կոտրված, կորած է, ուր և հավանաբար կլիներ փոքրիկ հիշատակություն։ Մյուս կամուրջը XVI—XVII դդ. շինություն է։

5. Կամուրջ—Կամարի հարավային երեսի անկյուններում կան երկու վարդակներ, որոնցից մեկի մոտ հետագայում կողքանց դրված մի քարի վրա՝ արաբատառ արձանագրություններ, կողքերին՝ երկու մարդու պատկերներ՝ ձեռք-ձեռքի բռնած։

Վերջին տարիներին կամուրջը մի կողմից լայնացնելով, դարձրել են մեքենայի ճանապարհ. գտնվում է Շալվա գետի վրա, Փիրջահան գյուղի մոտ։

Շրջանի հուշարձանները կառուցվել են IV—V դարերում, ընդհուպ մինչև XVII դարը, իսկ արձանագրությունները՝ մինչև XVII դարի վերջին տասնամյակները։

ՔՅԱԼԲԱՋԱՐԻ ՇՐՋԱՆ

Այս շրջանն ընդգրկում է Արցախի Վայկունիք գավառը և Բերդաձոր գավառի մի մասը։ Շրջանը բռնում է Տրտու (այժմ՝ Թարթառ) գետի վերին հոսանքի և նրա վտակների ձորահովիտները։ Բնակավայրերը տեղավորված են նեղ ձորում և վերնամասի հարթ տարածության վրա. բնակավայրերը խիստ փոքր են. բնակիչները գերազանցապես քրդեր են։ Միջին դարերում իշխանանիստ Ծար ավանի անունով կոչվել է նաև Ծար գավառ, որը կազմում էր Վերին Խաչենի մի մասը։ Այս շրջանը հնում թե՛ տնտեսապես և թե՛ իշխանական տիրույթի առումով կապված էր Սոդքի-Վարդենիսի շրջանի հետ։

Գավառի Ծար ավանը (այժմ՝ Ջառ) Արցախի Վախթանգյան տոհմի հնագույն բնակավայրն էր, որի մոտ էին գտնվում նրանց հոգևոր կենտրոն Ծարա վանքը և հռչակավոր ջերմուկները՝ «բաղանիք արքունականք» (այժմ՝ Խոտիսու)։

Վերջին դարերում Ծար ավանը մելիքանիստ գյուղ էր, որից մնացել է հին հիմքերի վրա վերանորոգված մելիքական ընդարձակ տունը՝ չորս միակտուր քարե սյուների վրա՝ փայտե թաղածածկով։

Հնում այս շրջանի միջով էին անցնում Արարատյան դաշտից դեպի Արցախ և Պարտավ տանող ճանապարհները։ Վարդենիսում բաժանվելով՝ դրանցից մեկը Դաշքենդ գյուղի վրայով հասնում էր Ծար ավանը և իջնում մինչև Խոտիսու ջերմուկները, ապա Թարթառի վրայով հասնում մինչև Պարտավ։ Երկրորդը՝ Վարդենիսի Ջոդ գյուղի վրայով և համանուն լեռնանցքով իջնում էր Թարթառի հովիտը և միանում նախորդին։ Հին ուղեցույցներում միայն այս վերջին ճանապարհն է նշված, որովհետև, չնայած իր դժվարությանը, սա ավելի կարճ էր։ Այդ ճանապարհի բանուկ լինելու մասին են վկայում Ջոդի լեռնանցքի տակ, այժմ ոսկու հանքերի բանվորական կայանի մեջ մնացած կարավանատունը, որը վերանորոգվելուց հետո օգտագործվում է։ Այդ վայրը հնում կոչվում էր Բերդկունք, որը տանում էր դեպի Բերդաձոր գավառը, որի մյուս ծայրում, ուր ճանապարհն անցնում է ծունկ կալմող Թարթառի վրայով՝ Հաթերք և Վաղահաս գյուղերի մոտ, դեռի վրա կար մի մեծ կամուրջ։ XIII դ. այն շինել էր Ասիա տիկինը՝ իշխան Հասանի որդի Գրիգոր Դուլյանի կինը,

Տարսայիճ Օրբելյանի դուստրը։ Այդ կամրջի մոտ կանգուն են երկրորդ՝ փոքր քարավանատան ավերակները։

Լեռնային Ղարաբաղի սահմանի մոտ է գտնվում Վախթանգյան տոհմի ամենամեծ հուշարձանը՝ Դադի վանքը։

ԽԱՆԼԱՐԻ ՇՐՋԱՆ

Շրջանը բռնում է Քուրակչայ և Գյանջաչայ գետերի վերին հոսանքների ձորահովիտները և իջնում մինչև Գանձակի մոտերքը։ Շրջանի մի մասը տեղավորված է պատմական Ուտիք նահանգի մեջ։ Այս շրջանի մեծ մասը վերջին դարերում մտնում էր Գյուլիստանի մելիքության կազմի մեջ, իսկ Քուրակչայի վերին մասի գյուղերը կազմում էին Գետաշենի՝ Մելիք-Մնացականյանների տիրույթը, որոնց ապարանքը այժմ էլ մնում է Գետաշեն-Զայքենդ գյուղում։

Շրջանի գյուղերը մեծ մասամբ հայաբնակ են, իսկ Խանլարի բնակչությունը խառն է։

ԳԵՏԱԲԱԿԻ ՇՐՋԱՆ

Այս շրջանը տեղավորված է Շամքոր և Զաղամ գետերի վերին հոսանքների հովիտներում, պատմական Արցախի Փառնես կամ Փառիսոս գավառի տարածքում։ Որպես անցյալի լուռ վկաներ կանգնած են Փառիսոսի բերդը և նրա ստորոտում փռված համանուն ավանի ավերակները, նաև Զարեքա վանքը և Ղարամուրատի վանքի ավերակները (Ղամշի վանք)։

Հնում այս շրջանով էր անցնում Գեղարքունիքից Քուռի հովիտը տանող այն ճանապարհը, որը Կրասնոսելսկ գյուղի վրայով իջնում էր Ղարամուրատ, ապա Փառիսոս քաղաքը և կոչվում էր Դուռն Փառիսոսի։ Այդ ճանապարհը այժմ էլ գործում է։

* * *

Գիտարշավի ընթացքում պարզվեց, որ մի շարք վայրերում նախկինում գոյություն ունեցած արձանագրությունները մասամբ անհետացել են, սակայն հայտնաբերվեցին անհայտ հուշարձաններ։ Գիտարշավի շրջագայության միջոցին պարզվեց, որ Արցախի տարածքում գտնված հուշարձանների ժամանակագրական և ոճական առանձնահատկությունները նույնն են, ինչ որ Հայաստանի այլ վայրերում, բայց կարևոր ենք համարում նշել տեխնիկական մի հանգամանք։ Արցախի մեծ մասում ճարտարապետական կոթողներ կառուցելու հիմնական նյութը եղել է տեղական քարը, որը անորակ է։ Հիմնական քարատեսակն այստեղ սպիտակավուն կրաքարն է՝ ոչ մեծ բեկորներով և սալանման շերտերով, որից չի կարելի ստանալ պատերին ազդեցիկ և վեհ տեսք տվող մեծ ու սրբատաշ կտորներ։ Այդ պատճառով էլ հուշարձանների մեծ մասն այստեղ շինված է ճեղքված քարերի բեկորներից և միայն շինությունների կարևոր և ակնառու մասերում են գործածվում սրբատաշ ու կանոնավոր քարեր։ Այս հանգամանքը իր հերթին նվազեցրել է արձանագրություններ փորագրելու տարածությունը։ Արցախում միայն մեկ տասնյակի հասնող նշանավոր վանքեր կան, որոնք սրբատաշ քարերով են շինված։

Այս երևույթը բացասական ազդեցություն է գործել հուշարձանների երկարակեցության, առավել ևս ավերումից հետո նրանց բեկորների պահպանման վրա։ Երբ ավերված հուշարձանները նորոգման են ենթարկվում, նրանց սրբատաշ քարերը նորից օգտագործվում են, որոշ չափով պահպանվում են քանդակազարդ և արձանագրված մասերը, որոնք հուշարձանի պատմության համար մեծ արժեք են ներկայացնում։ Որպես օրինակ կարող ենք հիշատակել

այժմ գոյություն չունեցող մի քանի հնագույն հուշարձաններ։ Այժմյան Ճարտար գյուղում մշակույթի տան հիմնապատերը փորելու ժամանակ հայտնաբերվել են 3—4 սրբատաշ բեկորներ, որոնք հաստատում են IV—V դդ. այդտեղ կառուցված բաղիլիկ տաճարի գոյությունը։ Այդ բեկորներից մեկը ատամնավոր քիվի քար է, մյուսը խաղողի որթի մաս՝ տերևներով և ողկույզով։ Մարտակերտ գյուղի վերին թաղում, Պետրոսյանների տան բակում պահվում է IV—V դարերի մի շենքի սյան խարիսխ՝ դարաշրջանի շատ բնորոշ ձևավորումով։ Հարևան բակում կան նույն ժամանակի խոյակ և սյան մասեր։ Սարդսյանի տան բակում են գտնվում բաղիլիկ տաճարի միայն հյուսիսային պատը, քառակող կոթողի մնացորդները և դրանց վրա ագուցված քառաթև քարե խաչի բեկորները։

Ամարասի նշանավոր վանքի ներկա շենքը վերջին դարերի գործ է, բայց նրա բեմի տակ ամբողջական վիճակում պահպանվել է Գրիգոր Լուսավորչի թոռ, Հայոց արևելից կողմանքում քրիստոնեություն տարածելիս նահատակված Դրիգորիսի ստորերկրյա դամբարանի շենքը, որն, ըստ մատենագրական վկայությունների՝ շինված է IV դարի սկզբում։

Դիվանի այս պրակը ևս հիմնականում կազմված է նախորդների սկզբունքով։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղանսրուեեանց—*Յովհանու եպիսկոպոսի Շահրիարցւոյ—Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատոր երկրորդ, էջմիածին, 1842։*

Ջալալեանց—*Սարգիս վարդապետ—Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տրփղիս, 1842։*

Իարխուդարյանց—*Մակար եպիսկոպոս—Արցախ, Բագու, 1895։*

Լալայան Երվանդ—*Դանձակի դավառ, «Աղդագրական հանդես», Ե գիրք, Վարանդա, «Աղդագրական հանդես», Բ գիրք։*

Դաղյան—*Խ. ծ. Վ. Մեծարանց որ և ս. Հակոբա վանից արձանագրությունները, «Բանասեր», Պարիզ, 1901։*

Տեր-Մովսիսյան—*Մեսրոպ եպիսկոպոս—Հայկական երեք մեծ վանքեր, Երուսաղեմ, 1938։*

ՊԱՏՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

—Գծիկով նշված են բնագրի մեջ (գծագրության) համապատասխան թվով շարադված գրերը։

...Կետերով նշանակված են բնագրի մեջ (գծագրության) շարադված գրերն՝ անկախ թվից։

| Փակագծով նշանակված են շարադված գրերի վերականգնումները (վերածնության մեջ),

| | Փակագծով նշանակված են բնագրի մեջ գրչի բաց թողած, սղած կամ առանց պատվի (սրդման նշան) սղումները (վերածնության մեջ),

[] Փակագծով նշանակված են բնագրում եղած ավելորդ գրերը (վերածնության մեջ)։

/ Գծիկով նշանակված են բնագրի տողերի սահմանները (վերածնության մեջ),